ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80,
կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№E/13/2343-21 առ "03" 09 2021թ.

Ձեր № առ " " 2021թ

«ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ
տնօրեն
պրն. Գ. Առուստամյանին

[ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-54/21-01/081 պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ]

Հարգելի՛ պարոն Առուստամյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար «պոմպեր» ապրանքների (այսուհետ՝ ապրանք) ձեռքբերման նպատակով ս/թ մարտի 23-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-54/21» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ-ի և միջև 2021թ. ապրիլի 19-ին կնքվել է №ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-54/21-01/081 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 298.800 (երկու հարյուր իննսունութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գնով: Պայմանագրով նախատեսված թվով 1 հատ 1,5K-6 մակնիշի պոմպային ագրեգատը «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ-ի կողմից չի մատակարարվել:

Համաձայն վերոհիշյալ պայմանագրի

- 2.4.1 կետի՝ «Վաճառողը պարտավոր է գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով»,
- 2.4.2 կետի՝ «Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում»,
- 2.4.4 կետի՝ «Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով»,
- Հավելված №1-ի՝ «Վաճառողը պարտավոր է մատակարարումը իրականացնել պայմանագրի կնքման օրվանից 60 օրացուցային օրվա ընթացքում»:

Հիմք ընդունելով հիշյալ պայմանագրի 2.1 կետը, այն է՝ գնորդը իրավունք ունի՝

- 2.1.1 ապրանքը սահմանված ժամկետում վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրացուցային օրից ավելի;
- 2.1.7 միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե էականորեն խախտվել է պայմանագիրը;
- 2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտվել էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ-ի հետ 2021թ. ապրիլի 19-ին կնքած №ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-54/21-01/081 պայմանագիրը:

Հայտնում ենք նաև, որ չմատակարարված ապրանքների մասով Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվեն նաև պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժերը և տուգանքները:

Հարգանքով՝

Գլխավոր տնօրեն՝ **Է. Մարտիրոսյան**

Կազմեց՝
ԳԲ 2-րդ կարգի մասնագետ՝
Գ. Մարկոսյան
Հեռ. 010-28-29-60, 33-08